# «Որոշակի պայմաններում բոլորն էլ կարող են գրոհայիններ դառնալ...»

*Մեր սեփական թղթակից Գայանե Անդրիկյանը հանդիպեց Էստոնիայի Գերագույն խորհրդի նախագահի օգնական, տեղեկատվական կենտրոնի տնօրեն Ռաուլ ՄՅԱԼԿԻ հետ:*

**Հ.- Ինչպե՞ս եք վերաբերվում Ղարաբաղի հարցին:**

Պ.- Մենք բազմաթիվ անգամ ստացել ենք Հայաստանի խորհրդարանի, հասարակական կազմակերպությունների, պատգամավորների դիմումները և, բնականաբար, այդ ամենը հետաքրքրություն է առաջացրել: Նույնատիպ դիմումներ ենք ստացել նաև Ղարաբաղից: Բնականաբար, մենք հասկանում ենք, որ սա բազմաշերտ երևույթ է և միշտ չէ, որ առաջին շերտը իրականության արտահայտությունն է: Այս պարագայում մենք պետք է փնտրենք այդ հակադրությունների աղբյուրները: Հենց ԽՍՀՄ բռնի և միութենական քաղաքականության վերացումը հնարավորություն կտա գտնելու այդ խնդրի լուծման ուղիները: Մենք Ղարաբաղյան հարցը չենք դիտում որպես ազգամիջյան բախում: Տեսնում ենք, որ կան ավելի խոր պատճառներ, որոնք իրենց մեջ են առել ժողովրդական զանգվածներին, դրա համար աշխատում ենք մեր կողմից հատուկ հայտարարություններ չանել այդ հարցի կապակցությամբ, որովհետև տվյալ դեպքում դրա լուծումը կապվում է այն բանի հետ, հանուն որի պայքարում են և՛ Էստոնիան, և՛ Հայաստանը: Արդեն միութենական կայսրության փլուզումը, կոնֆլիկտները Մոսկվայում ստանում են իրենց ծիլերը: Մերձբալթիկայում առանձին օբյեկտների նկատմամբ ոչ բոլոր գործողություններն են, որ վերևներում խրախուսվում են: Գուցե ինչ-որ տեղ գոյություն ունի ինքնագործունեություն, ամենավատ իմաստով դժվար կացության մեջ դնել Գորբաչովին:

**Հ.- Վերջերս ստացաք Հայաստանի խորհրդարանի դիմումն այն մասին, որ անկախ և միութենական հանրապետությունների քաղաքացիները ԽՍՀՄ զինված ուժերի կազմում չմասնակցեն հայ ժողովրդի դեմ տարվող պատժիչ գործողություններին:**

Պ.- Էստոնական հանրապետության որոշումը կա այն մասին, որ Էստոնիայի հանրապետության կառավարական մարմինները ցանկացած դեպքում չեն մասնակցում ԽՍՀՄ զինված ուժերի համալրմանը: Մեր օրենսդրությունը, վաղուց արդեն, չի հետապնդում նրանց, ովքեր հրաժարվում են ծառայությունից: Մեզ մոտ գործում է խաղաղ բնույթի, անզեն և առանց զորանոցային կարգի այլընտրական ծառայություն: Իսկ այն տղաները, որոնք գտնվում էին զինծառայության մեջ, ետ են վերադարձել:

**Հ.- Ինչպես եք վերաբերվում «հայ գրոհայիններ» արտահայտությանը:**

Պ.- Ես կարծում եմ, որ նման պայմաններում խոսել գրոհայինների մասին ամենաճիշտ ելքը չէ, որովհետև իսկապես, որոշակի պայմաններում բոլորն էլ կարող են գրոհային դառնալ: Եվ երբ խոսվում է գրոհայինների մասին, պետք է խոսել նաև օմոնի և միութենական զինված ուժերի մասին: Այնտեղ, որտեղ ժողովուրդը դիմագրավում է բռնի տեղահանությանը, ես «գրոհային» բառը չէի գործածի:

*Տալլին, 14 հունիս, 1991*